ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈՍԿ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND
ETHNOGRAPHY SONP

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И
ЭТНОГРАФИИ ГНКО

25 02. 2014 թ. № 2470-41

ՀՀ Մշակույթի նախարարի տեղակալ
Ա. Սամուելյանին

Հարգելի տիկին Սամուելյան

Ի պատասխան ս/թ. փետրվարի 24-ի 01/14.2/601-14 գրության հայտնում եմ Ձեզ, որ նախնական պայմանավորվածության համաձայն ինստիտուտի գիտաշխատող Ֆ. Մուրադյանը ուսումնասիրել է Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքի վարչական սահմաններում հաշվառված կիկլոպյան ամրոցի տարածքը: Հայտնում ենք Ձեզ, որ ներկայումս այս տարածքում կիկլոպյան ամրոցի որևէ հետք չի փաստագրվում, մշակութային շերտեր չկան կամ չեն պահպանվել:

Ինստիտուտի տնօրեն՝ Պ. Ավետիսյան

Երևան, 0025, Չարենցի փող. 15, հեռ., ֆաքս (37410) 55.68.96.
Республика Армения, 0025, Ереван, ул. Чаренца 15, тел., факс (37410) 55.68.96
Charents Str. 15, Yerevan, 0025, Republic of Armenia, Tel, Fax (37410 55.68.96

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

23.01.2019 N 06/11.2/193-19

ՀՀ Կոտայքի մարզ,
Ջրվեժ համայնքի ղեկավար՝
պարոն Ռոբերտ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Ի լրումն մեր 2018 թվականի օգոստոսի 15-ի
N 06/11.2/4048-18 գրության

Հարգելի պարոն Պետրոսյան

Ձեզ է տրամադրվում ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 4 թերթ:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ՀԱԽՈՒՄՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: HAKHUMYAN ANAHIT 5701650359

Անահիտ ՀԱԽՈՒՄՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն՝
Տիգրան Մանուկյան, հեռախոս՝ 011 621 725

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «23» 01 2019թ.
Մտից թիվ 195

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 12

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Ջրվեժ համայնքի տարածքում գտնվող «Քոսաղբյուր» վանական համալիր, Կիկլոպյան ամրոց և 13-րդ դարի եկեղեցու տեղավայրին հակադիր՝ ավտոճանապարհին հարող 2.013772 հա մակերեսով՝ հատուկ պահպանվող պատմական և մշակութային հողեր	2.013772 հա մակերեսով՝ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Ջրվեժ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Էլոյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Տ. Մանուկյան

Երևան, «5» «դեկտեմբերի» 2018թ.

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների

N	Հեղինակը, ամսաթիվը, համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2018-04-19, 01/16.1/2446-18	առաջարկություններ և առարկություններ չունի	ընդունվել է ի գիտություն	
2.	ՀՀ առողջապահության նախարարություն 2018-04-13, ԼԱ/4443-18	Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը լիարժեք ներկայացված չեն, մասնավորապես՝ պարզ չէ թե ինչ նպատակով է փոխվում նշված հողամասի նշանակությունը և արդյոք այդ հողամասերը չեն գտնվում ջրաղբյուրների սանիտարական պաշտպանական գոտում: Ելնելով վերոգրյալից եզրակացություն տրամադրել հնարավոր չէ:		
	ՀՀ առողջապահության նախարարություն 2018-06-21, ԱԹ/7703-18	առաջարկություններ և առարկություններ չունի	ընդունվել է ի գիտություն	
3.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 2018-04-19, 1/02.1/4673-18	ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ բնակչության պատսպարման համար համայնքային քաղաքացիական պաշտպանության պլանով հողատարածքներ նախատեսված չեն, որի համար առաջարկում եմ քննարկման ներկայացված հասարակական կառուցապատման նպատակով պատմական և մշակութային նշանակություն ունեցող Ջրվեժ համայնքի տարածքում գտնվող «Քոսաղբյուր» վանական համալիրի, կիկլոպյան ամրոցի և 13-րդ դարի եկեղեցու տեղավայրին հակադիր՝ ավտոճանապարհին հարող 2,013772 հեկտար հողատարածքից առանձնացվեն թաքստոցների կառուցման համար նախատեսվող տարածքներ, որոնց նշանակությունը հաստատվի որպես հատուկ նշանակության կամ պահուստային հողեր: Միաժամանակ հայտնում եմ, որ Ջրվեժ համայնքի ամբողջ բնակչության պատսպարումը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է կառուցել 1810 ք.մ. մակերեսով թվով 75 արագ կառուցվող թաքստոցներ:		
3	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 2018-06-20, 1/08.4/7335-18	առաջարկություններ և առարկություններ չունի	ընդունվել է ի գիտություն	
4.	ՀՀ մշակույթի նախարարություն 2018-04-27, 01/14.2/2567-18	Ի պատասխան Ձեր 2018 թ. ապրիլի 12-ի N 01/11.2/1819-18 գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի		

		վարչական սահմաններում գտնվող «Քոսաղբյուր» վանական համալիր, կիկլոպյան ամրոց և 13-րդ դարի եկեղեցի» հուշարձանախմբի պահպանական գոտու տարածքից 2,013772 հա հողի նպատակային նշանակության փոփոխությունը նախարարությունը համարում է ոչ նպատակահարմար, քանի որ այդ տարածքում նոր կառուցապատումը կհանգեցնի պատմականորեն ձևավորված միջավայրի խաթարման և տեսողական համայնապատկերի աղճատման:		
4.	ՀՀ մշակույթի նախարարություն 2018-05-23, 01/14.2/2989-18	Ի պատասխան Ձեր 2018 թ. մայիսի 7-ի N 06/11.2/2171-18 գրության՝ հայտնում ենք, որ նախարարության և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնագետները մեկ անգամ ևս ուսումնասիրել են ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող «Քոսաղբյուր» վանական համալիր, կիկլոպյան ամրոց և 13-րդ դարի եկեղեցի» հուշարձանախմբի և պահպանական գոտու տարածքը: Ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ հուշարձանախմբի պահպանական գոտում գտնվող 2,013772 հա հողամասում խորհրդային տարիներին կատարված գազատարի և ջրագծերի անցկացման, ինչպես նաև տարածքի հողահարթեցման հետևանքով կիկլոպյան ամրոցը քանդվել է, միաժամանակ ավերվել են նաև հնագիտական շերտերը: Այս նկատառումներից ելնելով՝ նախարարությունը չի առարկում հիշյալ 2,013772 հա հողի նպատակային նշանակության փոփոխությանը, սակայն, քանի որ հողամասը գտնվում է հուշարձանախմբի պահպանական գոտիների սահմաններում՝ անհրաժեշտ է պատմականորեն ձևավորված միջավայրի և պատմագեղարվեստական տեսքի պահպանության համար նշված տարածքում իրականացվելիք աշխատանքների նախագծերը, ինչպես նաև աշխատանքային ծրագրերը ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարություն՝ թույլտվություն ստանալու համար («Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված):	ընդունվել է	
5.	ՀՀ բնապահպանության նախարարություն 2018-04-17, 1/32/10816-18	Ի պատասխան Ձեր 2018թ. ապրիլի 11-ի N 01/11.2/1819 գրության, կապված ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու առաջարկության հետ, հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն առաջարկություններ չունի: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նախատեսվող	ընդունվել է	

		գործունեությունը <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան լինելու դեպքում, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:		
6.	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2018-04-17, 01/14.1/7098-18	Ի պատասխան Ձեր 2018 թվականի ապրիլի 12-ի N 01/11.2/1819-18 գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը կարծիք կտրամադրի ընդհանուր օգտագործման ավտոճանապարհներից հողամասի ելակետային տվյալների առկայության դեպքում (միջպետական և (կամ) հանրապետական նշանակության ճանապարհի անվանումը, հողամասի հեռավորությունը նշված ճանապարհից):		
6	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2018-06-27, 01/14.1/11019-18	Ի պատասխան Ձեր 2018 թվականի հունիսի 15-ի N 01/11.2/2802-18 գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը չի առարկում ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2.013772 հա մակերեսով հատուկ պահպանվող պատմական և մշակութային տարածքների հողերից նպատակային նշանակությունը փոխել բնակավայրի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի: Միաժամանակ անհրաժեշտ է, որ նշված հողատարածքի կառուցապատումը և տրանսպորտային միջոցների ելքի և մունքի ճանապարհի կառուցումը իրականացվի համաձայն <<Ավտոմոբիլային ճանապարհներ>> ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման 4-րդ կետի (այդ թվում տրանսպորտային հանգույցի թևերը) պահանջների՝ նախապես նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համաձայնեցնելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ:	ընդունվել է	
7.	ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 2018-04-16, ՄՍ/2335-18	առաջարկություններ և առարկություններ չունի	ընդունվել է ի գիտություն	
8.	ՀՀ Կոտայքի մարզպետարան 2018-04-16, 01/19.2/1697-18	առաջարկություններ և առարկություններ չունի	ընդունվել է ի գիտություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2019 թվականի N 9-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 12 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի վարչական տարածքում գտնվող 16-րդ փողոցի թիվ 28 հասցեի 2,013772 հեկտար մակերեսով հատուկ պահպանվող պատմական և մշակութային տարածքների հողակտորի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

	կողմ (10)	դեմ (0)	ձեռնպահ (0
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մարտի 15
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 31 մայիսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ գյուղ Ջրվեժ 16 րդ փողոց թիվ 28/2 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 21/07/2005 թ ի թիվ 1265 Ն և 15/03/2007թ ի թիվ 385 Ն որոշումներ ,
Համայնքի ավագանու 15/03/2019 թ ի թիվ 9 Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07 057 0361 0041
Մակերեսի չափը (հա)՝ 0.93558
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 31052019-07-0047, գաղտնաբառ՝ NNYAYRBX9GIA

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արտակ Մելիքյան

Գրանցված ակտերի՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գրանցման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 31 մայիսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ գյուղ Ջրվեժ 16-րդ թաղամաս թիվ 28 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 21/07/2005 թ ի թիվ 1265 Ն և 15/03/2007թ ի թիվ 385 Ն որոշումներ ,
Համայնքի ավագանու 15/03/2019 թ ի թիվ 9 Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-057-0361-0042
Մակերեսի չափը (հա)՝ 1.0782
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 31052019-07-0048, գաղտնաբառ՝ QSHLJ74ISGJA

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արտակ Մելիքյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստրատոր

Կնիք՝